

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԵՎ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ**

1. Նախագծի անհրաժեշտությունը (նպատակը).

ՀՀ վարչապետի մոտ 2026 թվականի հունիսի 16-ին կայացած՝ անշարժ գույքի գրանցման ինստիտուտի վերափոխման մասին խորհրդակցության N| Վ/75-2026 արձանագրության 2-րդ կետի 2.1-ին ենթակետով տրված հանձնարարականի կատարման անհրաժեշտությամբ:

Նշված հանձնարարականի համաձայն՝ անհրաժեշտ է օրենսդրական հիմքեր ստեղծել՝ ա. անշարժ գույքի նկատմամբ իրավունքների սահմանափակումների, մասնավորապես՝ արգելանքի կիրառումն ու դադարումը գրանցելու գործառույթը Կադաստրի կոմիտեի գործառույթների շրջանակից հանելու և իրավապահ ու դատական համակարգերի գործառույթներում ներառելու մասին՝ այն տրամաբանությամբ, որ տվյալ աշխատանքի իրականացման լիազորությամբ օժտվող պաշտոնատար անձը (օրինակ՝ քննիչը) աշխատանքն իրականացնի միայն իրեն հասանելի համապատասխան էլեկտրոնային համակարգում, ինչպես նաև ապահովվի տվյալ գործընթացի պատշաճ հետազոտելիությունը,

բ. անշարժ գույքի հասցեի գրանցման գործառույթը Կադաստրի կոմիտեի գործառույթների շրջանակից հանելու և համայնքի ղեկավարի որոշմամբ տրամադրված հասցեի՝ համապատասխան էլեկտրոնային համակարգում մուտքագրումը համայնքի գործառույթներում ներառելու վերաբերյալ:

Կադաստրի կոմիտեն դեռևս սկսած 2023 թվականից ձեռնարկել է միջոցներ՝ ուղղված անշարժ գույքի պետական ռեգիստրի էլեկտրոնային տեղեկատվական բազայում առկա՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների սահմանափակումների թվայնացմանն ու նույնականացմանը, ինչպես նաև սահմանափակում կիրառելու իրավասություն ունեցող մարմինների կողմից այդ սահմանափակումներն անշարժ գույքի պետական ռեգիստր էլեկտրոնային եղանակով ներկայացնելու գործընթացի ներդրմանը: Նշված միջոցառումների շրջանակներում իրականացել են օրենսդրական փոփոխություններ,

ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի փետրվարի 23-ի N 243-Ն որոշումը, որի N 3 հավելվածով սահմանվել են մինչև այդ որոշումն ուժի մեջ մտնելը կիրառված և գործող սահմանափակումների վերաբերյալ անշարժ գույքի պետական ռեգիստրի էլեկտրոնային տեղեկատվական բազայում առկա տեղեկատվության ցանկում ներառված սահմանափակումների խմբագրման, հաստատման կամ վերացման հետ կապված կարգավորումները: Միաժամանակ սահմանափակում կիրառելու իրավասություն ունեցող մարմինների համար նախատեսվել է երկամյա ժամկետ՝ նշված աշխատանքներն իրականացնելու համար: Իրականացված աշխատանքների արդյունքում անշարժ գույքի պետական ռեգիստրի էլեկտրոնային տեղեկատվական բազայում առկա չնույնականացված սահմանափակումների զգալի մասը նույնականացվել է: Ներկայումս չնույնականացված են մնում շուրջ 1500 սահմանափակումներ, որոնց նույնականացման ուղղությամբ Կադաստրի կոմիտեն շարունակում է իրականացնել ծավալուն աշխատանքներ: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ նշված սահմանափակումների կիրառման համար հիմք են հանդիսացել նախկինում՝ մինչև վերոնշյալ իրավակարգավորումների ընդունումը գործած ընթացակարգերը: Այդ ժամանակահատվածում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների սահմանափակումների վերաբերյալ փաստաթղթերն անշարժ գույքի պետական ռեգիստր են ներկայացվել թղթային եղանակով, ինչը մի շարք դեպքերում թույլ չի տվել ապահովել սահմանափակման, այն կիրառած մարմնի, իրավական հիմքի կամ այն անշարժ գույքի ամբողջական և միանշանակ նույնականացումը, որի նկատմամբ սահմանափակումը կիրառվել է:

Չնույնականացված սահմանափակումների՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի գործող տեղեկատվական բազայում պահպանվելն առաջացնում է իրավական անորոշություն և անհամաչափորեն սահմանափակում է անշարժ գույքի սեփականատերերի՝ իրենց գույքը տնօրինելու հնարավորությունը: Դրա հետևանքով համապատասխան անշարժ գույքերը փաստացի դուրս են մնում քաղաքացիական և տնտեսական շրջանառությունից, խոչընդոտվում են դրանց օտարումը, գրավադրումը և դրանց նկատմամբ այլ գործարքների իրականացումը, ինչն իր հերթին բացասաբար է անդրադառնում անշարժ գույքի շուկայի բնականոն զարգացման վրա:

Հարկ է նաև նշել, որ ՀՀ կառավարության 2024 թվականի փետրվարի 23-ի N 243-Ն որոշման N 3 հավելվածով սահմանված կարգով և ժամկետներում իրականացված աշխատանքների ընթացքում որևէ իրավասու մարմին շուրջ 1500 չնույնականացված

սահմանափակումների առնչությամբ չի դիմել դրանց խմբագրման, հաստատման կամ վերացման նպատակով և չի ներկայացրել դրանց նույնականացման համար անհրաժեշտ լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ նախագծով առաջարկվում է նշված չնույնականացված սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվությունը ներառել Կադաստրի կոմիտեի կողմից վարվող առանձնացված շտեմարանում: Նման կարգավորումը հնարավորություն կտա, մի կողմից, պահպանել այդ սահմանափակումների վերաբերյալ պատմական տեղեկատվությունը և անհրաժեշտության դեպքում ապահովել դրա հասանելիությունը, իսկ մյուս կողմից՝ բացառել չնույնականացված և պատշաճ իրավական հիմքով չհաստատված սահմանափակումների շարունակական ազդեցությունն անշարժ գույքի սեփականատերերի իրավունքների և գույքի քաղաքացիական շրջանառության վրա:

Իրավասու մարմինների անգործության կամ նախկինում կիրառված թղթային ընթացակարգերի անկատարության հետևանքները չեն կարող անորոշ ժամկետով դրվել քաղաքացիների վրա՝ շարունակաբար սահմանափակելով նրանց սեփականության իրավունքի իրականացումը: Ուստի առաջարկվող կարգավորումը միտված է իրավական որոշակիության ապահովմանը, սեփականության իրավունքի անհամաչափ սահմանափակումների վերացմանը և անշարժ գույքի տնտեսական շրջանառության խթանմանը:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ չնույնականացված սահմանափակումների՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի գրանցամատյանում այլևս չարտացոլումը կարող է որոշակի ռիսկեր առաջացնել անշարժ գույքի ձեռքբերողների, սեփականատերերի և այլ շահագրգիռ անձանց համար, քանի որ հետագայում կարող են ի հայտ գալ նախկինում կիրառված սահմանափակումների իրավական հիմքերը հաստատող փաստաթղթեր կամ դրանցից բխող պահանջներ: Այդ ռիսկերը նվազեցնելու և շահագրգիռ անձանց իրավունքների դատական պաշտպանության հնարավորությունը պահպանելու նպատակով նախագծի անցումային դրույթներով նախատեսվել է, որ առանձնացված շտեմարանում ներառված տվյալները չեն ոչնչացվում և պահպանում են իրենց տեղեկատվական ու ապացուցողական նշանակությունը: Մասնավորապես, սահմանվել է, որ առանձնացված շտեմարանում ներառված տվյալները անշարժ գույքի նկատմամբ իրավունքների, սահմանափակումների կամ դրանցից բխող իրավական հետևանքների վերաբերյալ վեճի դեպքում կարող են օրենքով սահմանված կարգով ներկայացվել դատարան և օգտագործվել որպես ապացույց:

Հետևաբար, առաջարկվող կարգավորմամբ մի կողմից վերացվում է չնույնականացված սահմանափակումների՝ անորոշ ժամկետով գրանցամատյանում պահպանման հետևանքով սեփականատերերի իրավունքների և անշարժ գույքի տնտեսական շրջանառության անհամաչափ սահմանափակումը, իսկ մյուս կողմից պահպանվում է նախկին սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվությունը և դրանց հետ կապված իրավունքների ու օրինական շահերի դատական պաշտպանության հնարավորությունը:

Այսպիսով, չնույնականացված սահմանափակումների վերաբերյալ տվյալների տեղափոխումն առանձնացված շտեմարան չի նշանակում դրանց իրավական կամ փաստական գոյության վերաբերյալ տեղեկատվության վերացում: Այն ապահովում է հանրային գրանցամատյանի արժանահավատության, իրավական որոշակիության և անշարժ գույքի շրջանառության կայունության միջև անհրաժեշտ հավասարակշռությունը՝ միաժամանակ համապատասխան իրավական վեճի դեպքում հնարավոր դարձնելով այդ տվյալների՝ որպես ապացույց օգտագործումը:

Առաջարկվող փոփոխությունների նպատակն է վերանայել և արդիականացնել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման միասնական մատյանում սահմանափակումների վերաբերյալ առկա տվյալները՝ ապահովելով դրանց հստակ, արժանահավատ և ամբողջական հաշվառումը, ինչպես նաև ձևավորելով սահմանափակումների պետական գրանցման համակարգի հետագա գործունեության նոր և իրավական որոշակիության սկզբունքին համապատասխան հիմք: Գործող կարգավորումների համաձայն՝ գույքի նկատմամբ իրավունքների սահմանափակումների պետական գրանցման հիմք են, ի թիվս այլնի, դատական ակտերը, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների, նախաքննություն իրականացնող մարմինների և օրենքով նախատեսված այլ պետական մարմինների որոշումները: Միաժամանակ սահմանափակման պետական գրանցումն իրականացվում է սահմանափակումը կիրառող մարմնի կողմից համապատասխան ակտը կամ որոշումն անշարժ գույքի պետական ռեգիստր ներկայացնելուց հետո:

Այսպիսի կառուցակարգի պայմաններում սահմանափակման կիրառումը և դրա վերաբերյալ տվյալը պետական ռեգիստրում արտացոլելը դիտարկվում են որպես միմյանց հաջորդող, սակայն տարբեր մարմինների կողմից իրականացվող երկու առանձին գործընթացներ: Սահմանափակումը կիրառելու իրավական և փաստական

հիմքերը գնահատում, դրա տեսակը, ծավալը, օբյեկտը, սուբյեկտը և գործողության ժամկետը որոշում է համապատասխան իրավասու մարմինը կամ դատարանը, մինչդեռ այդ որոշման հիման վրա անշարժ գույքի գրանցման համակարգում գրառումը ներկայում կատարվում է Կադաստրի կոմիտեի կողմից:

Նման երկաստիճան ընթացակարգը հանգեցնում է գործառույթների մասնատման: Սահմանափակման կիրառման իրավաչափության, անհրաժեշտության, համաչափության, դրա առարկայի և ծավալի համար պատասխանատու է սահմանափակումը կիրառած մարմինը, սակայն սահմանափակման գործնական արդյունավետությունն ապահովող էլեկտրոնային գրառումը կատարում է մեկ այլ մարմին, որը չի մասնակցել համապատասխան դատավարական կամ վարչական որոշման կայացմանը և իրավասու չէ վերանայելու այդ որոշման բովանդակային հիմնավորվածությունը:

Այս պայմաններում Կադաստրի կոմիտեի կողմից իրականացվող գործողությունն ըստ էության կրում է սահմանափակումը կիրառած իրավասու մարմնի որոշման արտացոլման բնույթ: Այդուհանդերձ, դրա համար իրականացվում է առանձին գրանցման գործընթաց, որի ընթացքում անհրաժեշտ է ստանալ, ընդունել, նույնականացնել և մշակել մեկ այլ մարմնի ընդունած փաստաթուղթը, որոշակի դեպքերում պահանջել լրացուցիչ տվյալներ, իսկ այնուհետև կատարված գրառման մասին տեղեկացնել ակտն ընդունած մարմնին:

Գործող համակարգում սահմանափակման վերաբերյալ ակտի կայացման և դրա՝ անշարժ գույքի պետական ռեգիստրում փաստացի արտացոլման միջև կարող է առաջանալ ժամանակային միջակայք: Նման միջակայքը հատկապես խնդրահարույց է արգելանքի և այլ անհետաձգելի սահմանափակումների դեպքում, որոնց նպատակը գույքի օտարումը, ծանրաբեռնումը, վերափոխումը կամ այլ ձևով իրավական կամ փաստական վիճակի փոփոխությունն անհապաղ կանխելն է:

Հետևաբար, այն դեպքում, երբ օրենքը սահմանափակումը կիրառող մարմնից պահանջում է գործել անհապաղ, սահմանափակման իրավական հետևանքի լիարժեք ապահովումը չպետք է պայմանավորված լինի որոշումը մեկ այլ մարմին ուղարկելու, այդ մարմնում փաստաթուղթն ընդունելու և դրա հիման վրա առանձին գործողություն կատարելու հաջորդականությամբ: Սահմանափակման կիրառումն ու դրա վերաբերյալ տվյալների միասնական ռեգիստրում արտացոլումը պետք է կազմեն տեխնոլոգիապես փոխկապակցված մեկ միասնական գործընթաց:

Առաջարկվող կարգավորումների հիմքում դրվում է այն սկզբունքը, որ որոշակի իրավական հետևանք առաջացնող որոշումն ընդունող և դրա բովանդակության համար պատասխանատվություն կրող մարմինը պետք է ապահովի նաև այդ որոշման անմիջական արտացոլումն իրավական նշանակություն ունեցող տեղեկատվական համակարգում:

Նշված մոտեցումը չի ենթադրում անշարժ գույքի նկատմամբ կիրառվող սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկատվական շտեմարանի վերացում կամ սահմանափակումների մասին տվյալների՝ անշարժ գույքի պետական ռեգիստրից դուրս պահպանում: Ընդհակառակը՝ սահմանափակումների վերաբերյալ տվյալները շարունակելու են արտացոլվել անշարժ գույքի միասնական տեղեկատվական համակարգում և հաշվի առնվել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման, տեղեկատվության տրամադրման և գործարքների իրականացման ընթացքում:

Փոփոխության էությունը սահմանափակման վերաբերյալ գրառումը կատարող սուբյեկտի փոփոխությունն է: Կադաստրի կոմիտեի պաշտոնատար անձի կողմից մեկ այլ մարմնի ընդունած որոշման հիման վրա առանձին գրանցում կատարելու փոխարեն՝ տվյալը համակարգ է մուտքագրվելու սահմանափակումը կիրառելու կամ վերացնելու իրավասություն ունեցող մարմնի՝ համապատասխան իրավասությամբ օժտված պաշտոնատար անձի կողմից:

Նույն տրամաբանությունը կիրառելի է նաև սահմանափակման փոփոխման և դադարման նկատմամբ: Սահմանափակման կիրառման հիմքի վերացման, դատական ակտի փոփոխման կամ բեկանման, կատարողական կամ քրեական վարույթի ավարտի, հայցի ապահովման միջոցի վերացման կամ օրենքով նախատեսված այլ հիմքի առկայության դեպքում սահմանափակումը վերացնելու իրավասություն ունեցող մարմինը պետք է անմիջապես ապահովի համապատասխան գրառման փոփոխումը կամ դադարեցումը:

Այսպիսով՝ սահմանափակման ամբողջ կենսափուլը՝ դրա կիրառումը, փոփոխումը, փոխարինումը և դադարումը, պետք է կառավարվի այն մարմնի կողմից, որն օժտված է համապատասխան նյութական կամ դատավարական որոշում ընդունելու լիազորությամբ:

Առաջարկվող կարգավորումների մյուս ուղղությունը վերաբերում է անշարժ գույքի հասցեների գրանցման գործող համակարգի վերափոխմանը:

Անշարժ գույքի հասցեն գույքի նկատմամբ գույքային իրավունք չէ և ինքնին չի առաջացնում, փոխանցում կամ դադարեցնում սեփականության կամ այլ գույքային իրավունք: Հասցեն անշարժ գույքի միավորի նույնականացման և տարածական տեղորոշման միջոց է, որը տրամադրվում է իրավասու տեղական ինքնակառավարման մարմնի որոշմամբ:

Գործող կարգավորմամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման որոշ դեպքերում անհրաժեշտ է ներկայացնել անշարժ գույքի հասցե տրամադրելու մասին իրավասու մարմնի որոշումը, որից հետո հասցեի վերաբերյալ տվյալները գրանցվում և արտացոլվում են Կադաստրի կոմիտեի տեղեկատվական համակարգում:

Այս կառուցակարգում ևս հասցեի տրամադրման և հասցեի վերաբերյալ տվյալների գրանցման գործառույթներն իրականացվում են տարբեր մարմինների կողմից: Համայնքի ղեկավարը կայացնում է հասցե տրամադրելու վարչական ակտը և պատասխանատու է դրա իրավաչափության, հասցեավորման կանոններին համապատասխանության և տրամադրված տվյալների ճշտության համար, իսկ այդ որոշման արդյունքում առաջացող տվյալը պետական տեղեկատվական համակարգում մուտքագրում է Կադաստրի կոմիտեն:

Առաջարկվող կարգավորմամբ համայնքի ղեկավարի կողմից հասցե տրամադրելու մասին որոշման ընդունումը և այդ հասցեի վերաբերյալ տվյալների համապատասխան էլեկտրոնային համակարգ մուտքագրումը պետք է կազմեն մեկ միասնական վարչական և տեխնոլոգիական գործընթաց: Հասցեի վերաբերյալ տվյալը համակարգ մուտքագրելու պահից այն պետք է հասանելի դառնա անշարժ գույքի պետական ռեգիստրին և փոխկապակցված այլ պետական տեղեկատվական համակարգերին՝ առանց Կադաստրի կոմիտեի կողմից հասցեի գրանցման առանձին վարույթի իրականացման:

2. Կարգավորման առարկան և բնույթը.

Նախագծերի փաթեթի կարգավորման առարկան անշարժ գույքի նկատմամբ իրավունքների սահմանափակումների կիրառման, փոփոխման և դադարման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների վերաբերյալ տվյալների ստեղծման, մուտքագրման, փոփոխման, պահպանման և օգտագործման հարաբերություններն են:

Կարգավորումները կրում են համակարգային և ինստիտուցիոնալ բնույթ, քանի որ չեն սահմանափակվում միայն փաստաթղթերը ներկայացնելու եղանակի կամ տեխնիկական ընթացակարգի փոփոխությամբ: Փոփոխվում է համապատասխան գործառույթների իրականացման իրավասությունների բաշխումը, սահմանվում է տվյալների ստեղծման և

դրանց հավաստիության համար պատասխանատու մարմինը, ինչպես նաև վերափոխվում է սահմանափակումների և հասցեների վերաբերյալ տեղեկատվության ձևավորման ամբողջ շղթան:

Նախագծերի փաթեթով համապատասխան փոփոխություններ են նախատեսվում կատարել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում, «Մնանկության մասին» օրենքում և «Կատարողական վարույթի մասին» օրենքում:

Միաժամանակ հատկանշական է, որ համապատասխան էլեկտրոնային համակարգը արդեն իսկ գործում է, և համապատասխան մարմինների կողմից սահմանափակումների անշարժ գույքի պետական ռեգիստրի էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանում մուտքագրման դեպքում լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չի առաջանալու:

Բացի այդ, նախագծով նախատեսվում է միասնական տեղեկանքը տրամադրել ինքնաշխատ եղանակով՝ այն գեներացնելով անմիջապես գործարքի կատարման պահին: Նշված կարգավորումը կնպաստի տեղեկանքում ներառվող տվյալների արդիականության և արժանահավատության ապահովմանը, կբացառի գործարքի կատարման և տեղեկանքի ձևավորման միջև ընկած ժամանակահատվածում տվյալների հնարավոր փոփոխությամբ պայմանավորված ռիսկերը և կպարզեցնի գործարքների իրականացման գործընթացը:

3. Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվող արդյունքը.

Նախագծերի փաթեթի ընդունման արդյունքում ակնկալվում է ձևավորել անշարժ գույքի նկատմամբ սահմանափակումների և անշարժ գույքի հասցեների վերաբերյալ տվյալների կառավարման սկզբունքորեն նոր համակարգ, որը հիմնված կլինի իրավասության, տվյալների ստեղծման, դրանց մուտքագրման և պատասխանատվության միասնականացման վրա:

- Կապահովվի սահմանափակումների կիրառման օպերատիվությունը: Որոշման էլեկտրոնային ստորագրման և համակարգում ամրագրման հետ միաժամանակ համապատասխան տվյալը հասանելի կլինի անշարժ գույքի պետական ռեգիստրին և հաշվի կառնվի գույքի նկատմամբ հետագա գրանցման գործողությունների ընթացքում:

- Կվերացվեն պետական մարմինների միջև փաստաթղթերի շրջանառության և նույն տվյալների կրկնակի մշակման անհարկի փուլերը: Սահմանափակումը կիրառած մարմինն այլևս պարտավորված չի լինի որոշումն առանձին ընթացակարգով ներկայացնել Կադաստրի կոմիտե, իսկ Կադաստրի կոմիտեն չի իրականացնի մեկ այլ մարմնի որոշման հիման վրա գուտ տեխնիկական բնույթի առանձին գրանցման վարույթ:

- Կիստակեցվի պատասխանատվության շրջանակը:
- Կապահովվի գործընթացների լիարժեք հետազոծելիությունը:
- Հասցեների մասով կապահովվի տվյալների ստեղծման և դրանց պետական համակարգերում արտացոլման միասնական գործընթաց: Համայնքի ղեկավարի կողմից հասցե տրամադրելու մասին որոշման ընդունումից հետո հասցեի տվյալը համայնքի կողմից անմիջապես մուտքագրվելու է համապատասխան Էլեկտրոնային համակարգ և հասանելի է դառնալու Կադաստրի կոմիտեին:

- Կներդրվի անշարժ գույքի վերաբերյալ տվյալների ապակենտրոնացված ստեղծման, սակայն կենտրոնացված օգտագործման սկզբունք: Յուրաքանչյուր մարմին իր իրավասության շրջանակում պատասխանատու կլինի իր կողմից ստեղծվող տվյալների մուտքագրման և արդիականացման համար, իսկ այդ տվյալները կապահպանվեն և կօգտագործվեն փոխգործունակ միասնական համակարգում:

Այս մոտեցմամբ անշարժ գույքի պետական ռեգիստրը կվերափոխվի ոչ միայն փաստաթղթեր ընդունող և դրանց հիման վրա գրառումներ կատարող մարմնի համակարգից, այլև պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ստեղծվող՝ անշարժ գույքին վերաբերող իրավական նշանակություն ունեցող տվյալները համախմբող միասնական հարթակի:

4. Նախագծի ընդունմամբ պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխությունները.

Նախագծերի ընդունումը պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում լրացուցիչ փոփոխություններ չի առաջացնում:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ.

ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ հաստատված հավելվածի՝ Կադաստրի կոմիտեի կողմից իրականացվող՝ ցանկի 10-րդ կետում սահմանված «Առցանց, ինքնաշխատ, անշարժ գույքի կադաստրի ներդրում» նպատակ հանդիսացող

միջոցառման, 10.2-րդ ենթակետում սահմանված «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին ՀՀ կառավարության որոշման ընդունում» միջոցառման ակնկալվող արդյունք հանդիսացող «Օրենսդրական դաշտի կարգավորում, որի արդյունքում սահմանափակում կիրառող իրավասու մարմինների կողմից սահմանափակումների կիրառման, փոփոխման, դադարման գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը կներկայացվեն միայն Էլեկտրոնային եղանակով՝ Կադաստրի կոմիտեի և համապատասխան մարմինների միջև հատուկ կապուղիների և Էլեկտրոնային տեղեկատվական համակարգերի միջոցով առցանց ռեժիմով» միջոցառման պահանջներից: